«___» ________ 2023թ.

# ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

# ԳՅՈՒՄՐՈՒ «ՖՈՏՈՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ

VII Բ ---- ԴԱՍԱՐԱՆ

--Քոչկյան-- Լիլիթ----

*Դասղեկի ազգանուն, անուն*

*«2022-2023 ուստարի»*

**Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները**

**1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը).**
դասարանում սովորում են 24 աշակերտներ, որոնցից 12տղա են, 12աղջիկ :

Աշակերտները միասնական են, սիրում և հարգում են միմյանց, միշտ պատրաստ են օգնելու իրար:

**2. Ուսումնադաստիրակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.**

**ա/ Կազմակերպել և իրականացնել դաստիարակչական աշխատանքներ:**
**բ/ Հերևել աշակերտների կարգապահությանը:**
**գ/ Նպաստել յուրաքանչյուր աշակերտի առաջադիմության և ինքնավստահության բարձրացմանը:**
**դ/ Ապահովել աշակերտների մասնակցությունն անցկացվող մրցույթներին և օլիմպիադաներին:**

**3. Հայեցի դաստիարակություն.**
Աշակերտներին պետք է դաստիարակել հայրենասիրական ոգով, որ ունենան հոգևոր բարձր արժեքներ և առաջնորդվեն դրանցով:

**3.1 Հոգևոր դաստիարակություն.**
ՀԵՊ առարկայի ուսումնասիրությունը և դասղեկի ժամին մեր եկեղեցու և քրիստոնեության առանձնահատկությունների մասին զրույցները, ինչպես նաև այցելությունները սրբավայրեր ավելի են ամրապնդում երեխաների հավատն ու հոգևոր արժեքները:

**3.2 Գեղագիտական դաստիարակություն.**
Երեխան միայն աշակերտ չէ, այլև քաղաքացի, անհատ:Հարկավոր է երեխաներին ծանոթացնել արվեստագետների կյանքին ու գործունեությանը, ձևավորել գեղագիտական ճաշակ՝ կինոյի , թատրոնի, երաժշտության միջոցով:

**3.3 Ռազմհայրենասիրական դաստիարակություն.**
Այսօր մեր պետության յուրաքանչյուր քաղաքացի գիտակցում է , որ զինվոր է՝ անկախ տարիքից և սեռից: Բոլորն են քաջ գիտակցում, որ մեր հայրենիքը պաշտպանության կարիք ունի, իսկ ռազմահայրենասիրական ոգին բարձր պահելու համար հաճախ պետք է կազմակերպել հանդիպումներ մեր հերոս ազատամարտիկների հետ, միջոցառումներ կազմակերպել, որտեղ ավելի մանրամասնորեն կծանոթանան մեր հայրենիքի պատմությանը:

**3.4 Ֆիզիկական դաստիարակություն.**

**Խրախուսել աշակերտներին մասնակցելու ոչ միայն ներվարժարանային , այլև համաքաղաքային մարզական միջոցառումներին, որոնք կնպաստեն նրանց ֆիզիկական պատրաստվածությանը և կամրապնդեն առողջությունը:**

**3.5 Աշխատանքային դաստիարակություն.**

Ձևավորել այն համոզմունքը, որ կյանքում ոչինչ հենց այնպես չի տրվում: Դասարանում ստեղծել աշխատանքային առողջ մթնոլորտ, աշակերտներին մասնակից դարձնել վարժարանում միջոցառումների համար տարվող աշխատանքներին:

**3.6 Բնապահպանական դաստիարակություն.**

Մաքուր միջավայրը առողջ կյանքի գրավականն է:Երեխան պիտի սիրի շրջակա միջավայրը, մասնակից լինի նրա մաքրության պահպանմանը, կատարի ծառատունկ:

3.7 Դպրոց-ընտանիք կապը.

Երեխային կրթում և դաստիարակում է և ընտանիքը, և դպրոցը:Այդ պատճառով պետք է կազմակերպել նպատակաուղղված և համատեղ աշխատանք, ավելի սերտ դարձնել դպրոց - ընտանիք կապը:

**Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը**

| Ուս Ծ. | Ուսումնակադաստ. աշխատ. բովանդակությունը | Կ. Ժ. | կատարողներ |
|---|---|---|---|
| 1 | Գիտելիքի օր | սեպ տեմ բեր | դասղեկ և աշակերտներ |
| 2 | Խաչվերաց տոն | | դասղեկ |
| 3 | <<Անկախ հայրենիքի անկախությունը 32 տարեկան է>>թեմայով զրույց: | | աշակերտներ |
| 4 | Ճանաչիր քո հայրենիքը | | դասղեկ, աշակերտներ |
| 5 | <<Ուսուցիչ կոչումը>> ուսուցչի օրվան նվիրված զրույց | հոկ տեմ բեր | աշակերտներ դասղեկ |
| 6 | Բանավեճ՝<<Իսկական ընկերը>> | | դասղեկ, աշակերտներ |
| 7 | Թարգմանչաց տոն | | դասղեկ, աշակերտներ |
| 8 | Զրույց<<Դրսում աշուն է>> | | դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| 9 | Զրույց<<Մարդիկ որոնց ես կուզենայի նմանվել>> | նոյեմբեր | դասղեկ, աշակերտներ |
| 10 | Զրույց<<Փրկենք երկիր մոլորակը>> | | Դասղեկ աշակերտներ |
| 11 | <<Ովքեր են մեր հերոսները>>զրույց | | Դասղեկ աշակերտներ |
| 12 | <<Համակարգիչն իմ ընկերն է,թե՞ թշնամին>>թեմայով զրույց | դեկտեմբեր | Դասղեկ, աշակերտներ |
| 13 | Առաջադիմության քննարկում,ստուգարքների նախապատրաստում, | | դասղեկ |
| 14 | Ուրախ դիմավորենք Ամանորը | | Դասղեկ ուսուցիչներ |
| 15 | Առաջին կիսամյակի ամփոփում | | դասղեկ |
| 16 | Լինենք բարեկիրթ | | Դասղեկ,աշակերտներ |
| 17 | <<Մեր հերոս նախնիները>>թեմայով զրույց | հունվար | Դասղեկ,աշակերտներ |
| 18 | <<Հայոց բանակի տոնը>>զրույց | | Դասղեկ,աշակերտներ |
| 19 | Առնո Բաբաջանյան<<Երաժշտության ուժը>> | | դասղեկ |
| 20 | ԱԻՆ-ի գործունեությունը մեր կյանքում | | Դասղեկ,աշակերտներ |
| 21 | Ընթերցել նյութեր Տյառնընդառաջ տոնի մասին | փետրվար | Դասղեկ,աշակերտներ |
| 22 | Գիրքն իմ բարեկամն է | | Դասղեկ,աշակերտներ |
| 23 | <<Մայրության և գեղեցկության օրը>> | մարտ | Դասղեկ,աշակերտներ |
| 24 | <<Մի հետաքրքիր դեպք իմ  կյանքից>>զրույց | | Դասղեկ,աշակերտներ |
| 25 | Էքսկուրսիա,ֆիլմի դիտում | | Դասղեկ,աշակերտներ |
| 26 | Սպորտի դերը մեր կյանքում | | Դասղեկ աշակերտներ |

| | | | |
|---|---|---|---|
| 27 | Օրը սկսենք<<Բարևով>> | | դասղեկ |
| 28 | Մոր կերպարը | ապրիլ | դասղեկ |
| 29 | Զեկույցերի ներկայացնում Եղեռնի մասին | | աշակերտներ |
| 30 | <<Ում կուզեի նմանվել այս կյաքում>>զրույց | | Դասղեկ,աշակերտներ |
| 31 | <<Ճակատագրական մայիսը մեր կյանքում>>զրույց | մայիս | Դասղեկ,աշակերտներ |
| 32 | <<Ճանապարհային երթևեկության կանոնները | | Դասղեկ,աշակերտներ |
| 33 | Երկրորդ կիսամյակի ամփոփում | | դասղեկ |
| 34 | Ծնողական ժողովի անցկացում | | Դասղեկ,ուսուցիչնէչ |